**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«06» մարտի 2024 թվականի N 248

# ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԼՐԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածից Կանանց տոնի կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի իգական սեռի աշխատողներին վճարել լրավճար՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

*Հավելված*
*Սպիտակ համայնքի ղեկավարի*
*«06» մարտի 2024թ. թիվ 248 որոշման*

**ՑՈՒՑԱԿ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԼՐԱՎՃԱՐ ՍՏԱՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ**

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Զբաղեցրած պաշտոնը | Լրավճարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | Ֆրանգյան Ազգանուշ | Աշխատակազմի քարտուղար | 13 340 |
| 2 | Պետրոսյան Քնարիկ | Համայնքի ղեկավարի օգնական | 13 340 |
| 3 | Դիլբարյան Արմինե | Համայնքի ղեկավարի օգնական | 13 340 |
| 4 | Կիրակոսյան Սուսան | Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի վարչական ղեկավար | 13 340 |
| 5 | Մինասյան Թամարա | Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական ղեկավար | 13 340 |
| 6 | Մարկոսյան Գայանե | Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրի վարչական ղեկավար | 12 500 |
| 7 | Ռուստոմյան Հրանուշ | Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 12 500 |
| 8 | Դանիելյան Մելանյա | Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ | 13 340 |
| 9 | Շուշանյան Թագուհի | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժ/պ | 13 340 |
| 10 | Զոքանյան Գայանե | Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ | 13 340 |
| 11 | Օհանյան Լուսինե | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գույքի, առևտրի և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | 13 340 |
| 12 | Պողոսյան Ալլա | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գույքի, առևտրի և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ | 13 340 |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Շիրոյան Անուշ | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի  գլխավոր մասնագետ | 13 340 |
| 14 | Կարապետյան Իննա | Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ | 13 340 |
| 15 | Աբրահամյան Լուսինե | Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի գլխավոր մասնագետ | 13 340 |
| 16 | Թումանյան Արմինե | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ | 13 340 |
| 17 | Ասատրյան Վանուհի | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 13 340 |
| 18 | Անդրեասյան Գեղանուշ | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետ | 12 500 |
| 19 | Գալոյան Անահիտ | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 20 | Մամյան Թեհմինե | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 21 | Խումարյան Անահիտ | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 22 | Գասպարյան Լիաննա | Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 23 | Սահակյան Նարինե | Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի ժ/պ | 13 340 |
| 24 | Գրիգորյան Լիանա | Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Վարդանյան Անուշ | Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 26 | Մաթոսյան Հայկուհի | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 27 | Ասատրյան Լիանա | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 28 | Գալստյան Քրիստինե | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 29 | Զարմանյան Հերմինե | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 30 | Դանիելյան Աստղիկ | Աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ | 13 340 |
| 31 | Արշակյան Արմինե | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 32 | Մագոյան Հասմիկ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 33 | Բայրախտարյան Մերի | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 34 | Մխիթարյան Լուսինե | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 35 | Մկրտչյան Մարուշ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 36 | Սարգսյան Հռիփսիկ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 12 500 |
| 37 | Պողոսյան Սիլվա | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 12 500 |
| 38 | Սարգսյան Էմիլիա | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 39 | Խաչատրյան Վարդուհի | Աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ | 13 340 |
| [illegible] | Գևորգյան Լիլիթ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 41 | Ռշոյան Սիրանուշ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 42 | Աղաբաբյան Սյուզաննա | Աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ | 13 340 |
| 43 | Պողոսյան Տաթևիկ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 44 | Կարապետյան Ագնեսա | Աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ | 13 340 |
| 45 | Առաքելյան Արմինե | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 46 | Քոսյան Քրիստինե | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 13 340 |
| 47 | Երանոսյան Հասմիկ | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 12 500 |
| 48 | Մարտիրոսյան Իրինա | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 12 500 |
| 49 | Ավետիսյան Մարո | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 12 500 |
| 50 | Սիմոնյան Արմինե | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 13 340 |
| 51 | Հովհաննիսյան Հասմիկ | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 13 340 |
| 52 | Գասպարյան Նարինե | Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 13 340 |
| 53 | Մելիքյան Գոհար | Հավաքարար | 12 500 |
| 54 | Առաքելյան Գրետա | Հավաքարար | 12 500 |
| 55 | Պողոսյան Սվետլաննա | Հավաքարար | 12 500 |

| | | | |
|---|---|---|---|
| 56 | Մալխասյան Նելլի | Հավաքարար | 13 340 |
| 57 | Ավետիքյան Նարինե | Հավաքարար | 12 500 |
| 58 | Հակոբյան Լեյլի | Հավաքարար | 12 500 |
| 59 | Մարտիրոսյան Համեստուհի | Հավաքարար | 13 340 |
| 60 | Իվանյան Սաթենիկ | Հավաքարար | 13 340 |
| 61 | Գևորգյան Գեղեցիկ | Հավաքարար | 12 500 |
| 62 | Մարգարյան Աննա | Հավաքարար | 12 500 |
| 63 | Մինասյան Վարդիթեր | Հավաքարար | 12 500 |
| 64 | Պապիկյան Օֆելյա | Հավաքարար | 12 500 |
| 65 | Ոսկանյան Ծաղիկ | Հավաքարար | 12 500 |
| 66 | Ամիրյան Անահիտ | Հավաքարար | 12 500 |
| 67 | Սարգսյան Գոհար | Հավաքարար | 12 500 |
| 68 | Ուռույան Նարինե | Հավաքարար | 13 340 |
| 69 | Հակոբյան Սիլվա | Հավաքարար | 12 500 |
| 70 | Մարտիրոսյան Սուսամբար | Հավաքարար | 12 500 |
| 71 | Ալեքսանյան Արեքնազան | Հավաքարար | 12 500 |
| 72 | Մագոյան Արմիդա | Հավաքարար | 12 500 |
| 73 | Գալոյան Սուսաննա | Հավաքարար | 12 500 |
| 74 | Աբգարյան Հերմինե | Հավաքարար | 12 500 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024 թվականի N 249

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի հավելվածի 10-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. 2024 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 14:30-ին անցկացնել մրցույթներ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար:

2. Մրցույթներն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3. Մրցույթների անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք.Սպիտակ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹՆԵՐ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սպիտակի համայնքապետարանը հայտարարում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, գյուղ Շենավան 2-րդ փողոց № 45), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Ծաղկաբեր 2-րդ փողոց, շենք 12) և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» (գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Կաթնաջուր 1-ին փողոց 2 փակուղի 5/1: Հաստատությունը գործունեություն է իրականացնում նաև ՀՀ Լոռու մարզ Սպիտակ համայնք գյուղ Գեղասար, 3-րդ փողոց 2-րդ նրբանցք 2 հասցեում) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներ (այսուհետ՝ Մրցույթ):

**Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը՝**

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի թիվ 416-Ն հրամանով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված գործառույթները:

Վերոհիշյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ամսական պաշտոնային դրույքաչափը կազմում է 130 000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Մրցույթներին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք՝

1) ունեն բարձրագույն կրթություն.

2) բավարարում են «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Տնօրենների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթներին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) ովքեր դատապարտվել են հանցագործության կատարման համար, և նրանց դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) որոնց օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ովքեր զրկվել են որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ովքեր նախընթաց երեք տարիների ընթացքում եղել են սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար․

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ովքեր ներկայացրել են փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

**Մրցույթները կկայանան 2024թ. մայիսի 30-ին ժամը 14:30-ին՝ Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7):**

Մրցույթներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Դիմումներն ընդունվում են Սպիտակի համայնքապետարանում ամեն օր, ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ, կիրակի օրերից (հասցեն՝ ք. Սպիտակ, Շահումյան 7, հեռ.՝ 0255-2-25-00):

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2024թ. մայիսի 15-ը ժամը 18:00-ն:**

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթ անցկացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներին համապատասխան:

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի մրցույթը անցկացվում է մեկ փուլով՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթի համար դիմած անձը մրցույթին մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և այլ տեղեկությունների համար կարող են դիմել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ (ք.Սպիտակ, Շահումյան 7, հեռ.՝ 0255-2-25-00):

**Սպիտակի համայնքապետարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 250

## ԼԱՈՒՐԱ ՇԱՎԱՐՇԻ ՄԵԼՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, 219$^{1}$-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ջրաշեն գյուղի բնակիչ Լաուրա Շավարշի Մելոյանն ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-095-0042-0018 կադաստրային ծածկագրով հողամասից 0,00229 հա մակերեսով հատված և չի վերացրել դրա հետևանքները, հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցելով 16,60 քառակուսի մետր մակերեսով խանութ, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Հենրիկ Մարտինի Իգիթխանյանի կողմից 2024 թվականի փետրվարի 19-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Լաուրա Շավարշի Մելոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Լաուրա Շավարշի Մելոյանին:

3. Լաուրա Շավարշի Մելոյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Սպիտակի համայնքապետարանի **900245161063** գանձապետական հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024 թ. № 251

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՊԵՏԱՑ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18122013-06-0039 վկայականը և Արման Նորիկի Մելքոնյանի (ծնված՝ 29.07.1987թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Վարպետաց թաղամաս Երիտասարդության փողոց 66 բնակելի տուն» հասցեում գտնվող 06-006-0173-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,00990 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«06» մարտի 2024թ. № 252

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՎԻԹԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՏԱՐԱԺԱՄԿԵՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Էդուարդ Դավիթի Չոբանյանը դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով տարաժամկետել Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի թիվ 746 որոշմամբ սահմանված փոխադրամիջոցների գույքահարկի վճարումը՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի թիվ 746 որոշմամբ Էդուարդ Դավիթի Չոբանյանից գանձման ենթակա գումարների գանձումը տարաժամկետել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Դավիթի Չոբանյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2024 թվականի մարտի 6-ի թիվ 252 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի թիվ 746 որոշմամբ գանձման ենթակա գումարի տարաժամկետման

| **Սպիտակ համայնքի ղեկավարի 30.08.2023թ. թիվ 746 որոշմամբ գանձման ենթակա գումարը (ՀՀ դրամ)** | **Ամսական վճարվելիք գումարի չափը (ՀՀ դրամ)** | **Վճարման ժամկետը** |
|---|---|---|
| 492 009 | 50 000 | 28.03.2024թ. |
| | 50 000 | 29.04.2024թ. |
| | 50 000 | 29.05.2024թ. |
| | 50 000 | 28.06.2024թ. |
| | 50 000 | 29.07.2024թ. |
| | 50 000 | 28.08.2024թ. |
| | 50 000 | 30.09.2024թ. |
| | 50 000 | 28.10.2024թ. |
| | 50 000 | 28.11.2024թ. |
| | 42 009 | 30.12.2024թ. |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՓՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 253

## ՎԱՆՈՒՀԻ ՎԱՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վանուհի Վանիկի Ասատրյանը Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 034/28-2482 գրության դեմ ներկայացրած վարչական բողոքով հայտնել է, որ դիմումը բավարարվել էր օրենքի ուժով և այդ պայմաններում չէր կարող կայացվել մերժման մասին որոշում, բացի դա Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից չի պարզվել այն հարցը, թե արդյոք դրանք նույն հողամասերը չեն:

Վարչական վարույթի քննարկման ժամանակ Վանուհի Վանիկի Ասատրյանը պնդեց վարչական բողոքի պահանջը, ինչպես նաև հայտնեց, որ Սպիտակ քաղաքում առկա են դեպքեր, երբ անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը ենթարկվել է փոփոխության և իրավահաստատող փաստաթղթերում ու կադաստրային քարտեզում առաջացել է կադաստրային ծածկագրի անհամապատասխանություն: Վանուհի Վանիկի Ասատրյանը որպես օրինակ բերեց իր ամուսնուն՝ Գարիկ Սուրիկի Սահակյանին, սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի դեպքը:

Ուսումնասիրելով վարչական բողոքը, վարչական վարույթի նյութերում առկա փաստաթղթերը, լսելով Վանուհի Վանիկի Ասատրյանին՝ գտնում եմ, որ Վանուհի Վանիկի Ասատրյանի վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝

«1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

...

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 14-ի թիվ 84 որոշման համաձայն Վանուհի Վանիկի Ասատրյանին կառուցապատման իրավունքով տրամադրվել է 020-003-03 ծածկագրով հողամաս, մինչդեռ Վանուհի Վանիկի Ասատրյանը ներկայացրել է 06-006-0021-0007 կադաստրային ծածկագրով հողամասից հատվածի հատակագիծ:

Վանուհի Վանիկի Ասատրյանը, օրենքի ուժով պարտավորված լինելով ապացուցելու 020-003-03 ծածկագրով հողամասի և 06-006-0021-0007 կադաստրային ծածկագրով հողամասից հատվածի նույնական լինելու փաստը, չի ներկայացրել դրա վերաբերյալ որևէ ապացույց, հետևաբար դիմումը չի կարող համարվել բավարարված օրենքի ուժով, և համայնքի ղեկավարի կողմից դիմումի բավարարման պարագայում Վանուհի Վանիկի Ասատրյանին կտրամադրվեր ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանուհի Վանիկի Ասատրյանի վարչական բողոքը մերժել՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 034/28-2482 գրությունը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում հանձնել Վանուհի Վանիկի Ասատրյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վանուհի Վանիկի Ասատրյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 254

## ԳԱՐԻԿ ՍՈՒՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարիկ Սուրիկի Սահակյանը Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 034/28-2483 գրության դեմ ներկայացրած վարչական բողոքով հայտնել է, որ դիմումը բավարարվել էր օրենքի ուժով և այդ պայմաններում չէր կարող կայացվել մերժման մասին որոշում, բացի դա Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից չի պարզվել այն հարցը, թե արդյոք դրանք նույն հողամասերը չեն:

Վարչական վարույթի քննարկման ժամանակ Գարիկ Սուրիկի Սահակյանը պնդեց վարչական բողոքի պահանջը, ինչպես նաև հայտնեց, որ Սպիտակ քաղաքում առկա են դեպքեր, երբ անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը ենթարկվել է փոփոխության և իրավահաստատող փաստաթղթերում ու կադաստրային քարտեզում առաջացել է կադաստրային ծածկագրի անհամապատասխանություն: Գարիկ Սուրիկի Սահակյանը որպես օրինակ բերեց իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի դեպքը:

Ուսումնասիրելով վարչական բողոքը, վարչական վարույթի նյութերում առկա փաստաթղթերը, լսելով Գարիկ Սուրիկի Սահակյանին՝ գտնում եմ, որ Գարիկ Սուրիկի Սահակյանի վարչական բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝

«1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

...

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 29-ի թիվ 103 որոշման համաձայն Գարիկ Սուրիկի Սահակյանին կառուցապատման իրավունքով տրամադրվել է 020-003-02 ծածկագրով հողամաս, մինչդեռ Գարիկ Սուրիկի Սահակյանը ներկայացրել է 06-006-0021-0007 կադաստրային ծածկագրով հողամասից հատվածի հատակագիծ:

Գարիկ Սուրիկի Սահակյանը, օրենքի ուժով պարտավորված լինելով ապացուցելու 020-003-02 ծածկագրով հողամասի և 06-006-0021-0007 կադաստրային ծածկագրով հողամասից հատվածի նույնական լինելու փաստը, չի ներկայացրել դրա վերաբերյալ որևէ ապացույց, հետևաբար դիմումը չի կարող համարվել բավարարված օրենքի ուժով, և համայնքի ղեկավարի կողմից դիմումի բավարարման պարագայում Գարիկ Սուրիկի Սահակյանին կտրամադրվեր ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ ***որոշում եմ.***

1. Գարիկ Սուրիկի Սահակյանի վարչական բողոքը մերժել՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 23-ի թիվ 034/28-2483 գրությունը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում հանձնել Գարիկ Սուրիկի Սահակյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գարիկ Սուրիկի Սահակյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. №255

## «ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, համաձայն «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 111-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետի «դ» պարբերության, հիմք ընդունելով «ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2024 թվականի մարտի 5-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66005231) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Ջրաշեն 8 փ. 11 նրբ. շ. 5/1» հասցեում գտնվող շինության վրա 1 քմ չափերով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ համաձայն էսքիզի, 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 256

## «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության 2023 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 93/14-952 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աղետների ռիսկերի կառավարման պլանը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Հովակիմյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ մարտի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 257

## ԱՐՏԵՄ ՍԱՄՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՕՖԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԷԼԼԱ ՍԱՄՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՔՍԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ,ՇՈՂԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ԱՐՏԱՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,099 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 359740 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06086ZB4N7DR) և Արտեմ Սամվելի Կարապետյանի (ծնված՝ 13.12.1976թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արտեմ Սամվելի Կարապետյանին, Օֆիկ Անդրանիկի Կարապետյանին, Էլլա Սամվելի Կարապետյանին, Աքսաննա Սամվելի Կարապետյանին,Շողիկ Սամվելի Կարապետյանին, Սամվել Արտաշի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,099 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 106,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Շենավան, 3-րդ փողոց, 17 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» մարտի 2024թ. № 258

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 06-006-0271-0097 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,067 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2146830 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006JWNF4ST) և Վարդգես Հրայրի Քոսյանի ներկայացուցիչ Վարդուշ Վանիկի Առաքելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0271-0097 կադաստրային ծածկագրով 0,067 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 104,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 8,0 քառակուսի մետր մակերեսով գոմին տրամադրել «Սպիտակ համայնք Սպիտակ ք., Ա. Մյասնիկյանի փողոց, 37 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 06 » մարտի 2024թ. № 259

## ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, Կանանց տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ շնորհավորական բացիկներ, ծաղկային կոմպոզիցիաներ հուշանվերներ և տորթեր ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 573 400 ՀՀ դրամ:

2.Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գույքի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«06» մարտի 2024թ. № 260

# ՍԱՐԳԻՍ ՍՈՒՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 50-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Սարգիս Սուրենի Սարգսյանի դիմումի քննարկման օրվա, ժամի և վայրի մասին Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 034/28-803 ծանուցագիրը Սարգիս Սուրենի Սարգսյանի կողմից ստանալու վերաբերյալ փոստային առաքման ծանուցագիրը մինչև դիմումի քննարկման օրը չի վերադարձել Սպիտակի համայնքապետարան, պատշաճ վարչարարություն իրականացնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սարգիս Սուրենի Սարգսյանի դիմումի քննարկումը հետաձգել:
2. Դիմումի քննարկման օր նշանակել 2024 թվականի մարտի 19-ին, ժամը 16:00-ին:
3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Սարգիս Սուրենի Սարգսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 07 » մարտի 2024թ. № 261

## ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա առթիվ հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 47 030 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 11 » մարտի 2024թ. № 262

## ԾԱՂԿԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2011թ. մարտի 11-ին Ճապոնիայի ցունամիի, ինչպես նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար ծաղկային կոմպոզիցիա և ծաղիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 40 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2024թ. № 263

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՓԱՌԱՆՁԵՄ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 111-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Փառանձեմ Համբարյանի 2024 թվականի մարտի 6-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Փառանձեմ Համբարյանին (ՀՎՀՀ 66911655) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Խնկոյան 1 փ. տ. 54» հասցեում գտնվող խանութում (ոչ հիմնական շինություն՝ 18 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2024թ. № 264

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության 2023 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 93/14-1072 գրությունը՝ ***որոշում եմ***.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աղետների ռիսկերի կառավարման պլանը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի «Արեգակ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Պետրոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ մարտի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2024թ. № 265

# ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի հունվարի 10-ի թիվ 1 որոշմանը կից ցուցակում Միխաիլ Մացակի Մաթոսյանի (ծնված 09.04.1933թ., մահացած 04.08.2023թ.) անունը սխալմամբ գրվել է «Վոլոդյա», իսկ հայրանունը չի գրվել, հիմք ընդունելով Միխաիլ Մացակի Մաթոսյանի մահվան վկայականը և Միխաիլ Մացակի Մաթոսյանի որդու՝ Միեր Միխաիլի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի հունվարի 10-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Թորոսյան և Շահումյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 1 որոշմանը կից ցուցակի 50-րդ տողում նշված «Մաթոսյան Վոլոդյա» բառերը փոխարինել «Մաթոսյան Միխաիլ Մացակի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մարտի 11
ք.Սպիտակ